և մի ախորժ թթուաշ համ ունի. տաքութիւնը սաստիկ չէ, այնպէս որ նորա մէջ ապրում են ձկներ: Երկուքը գտնվում են Թայղաբարայ հովտումը. մէկը Զէյվայ, իսկ Միւսը Թղնուտ գիւղի մօտ: Սորանք ծծմբաջրեր են, որոնցից երևելի են Թղնուտայ ջրերը: Չորրորդը գտնվում է Մագուայ խանութեան մէջ Շոթ գիւղի մօտ, որ բոլորովին տարբեր յատկութիւն ունի: Սորա աւազանը նման է մի քարեայ թոնիրի, որից բղխում է ջուրը բիւրեղից յստակ: Բայց այդ թափանցիկ ջուրը բլրից իջնելով և խառնվելով հողի հետ փրփրում և քարանում է: Այս բնագիտական երևոյթները թողնելով բնագէտների ուշադրութեանը, պէտք է մի թեթև հայեացք ձգել այդ աշխարհի աւերակների վերայ և վերջացնել գործի առաջին մասը:

Դժուար է խօսել մի աշխարհի պատմական մնացորդների վերայ, երբ նա ամեն կերպով աւերակ է, ճշմարիտ, որ Հայաստան անուն աշխարհը ոչ այլ ինչ է, բայց եթէ աւերակների մի անհեթեթ կոյտ, որ բիւր անգամ շինված և բիւր անգամ աւերված աւերակներ աւերակների վերայ բարձրանալով: Բայց ընդհանրապէս տեսնվում է, որ ամեն մի նշանաւոր փլատակի կողքին, դեռ կենում են նրա յաւիտենական պահանորդները, որոնց ազգային սեպհականութիւնք են եղել դրանք ժամանակով: Վերին Հայաստանի ամենահին կեդրոնը, որ իւր աննման գեղեցկութեամբ արժանացել է թագա-